



ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ Է Լ Է Փ Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտուն 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տ Է Լ Է Փ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անշուշտակ ծրագրերը. Ֆրանսիական լրագրի
կարծիքը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէցօր. Մա-
տենագրութիւն. Նամակ Ալեքսանդրօպօլից. Նա-
մակ Ներքին Արտաքին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱ-
ՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ.
Մի նոր առաջարկ. Կրեմլ. Նամակի վերադար-
ձը. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—
ՀԱՌԱՊԵՐՆԵՐ. ԲՈՐՄԱ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիւրքիայից.

ԱՆՆՊԱՏԱԿ ԵՐԱՐԻՆԵՐ

Թիւրքաշայերին զաղթեցնելու ծրագիրը,
որ ծնունդ է առել Ամերիկայում, արձա-
ղանք է դառնում և Անգլիայում: Այդ փա-
սակար և նոյն իսկ շատ անիրաւոր ծը-
րագիրը հանգէս է բերում այն ժամանակ,
երբ հարկաւոր զիւղերի ժողովուրդի հա-
մար անհրաժեշտ է հակառակ ուղղութիւն,
հայ, ապրուստ:

Մի տարօրինակ նամակ ենք կարդում
անգլիական «Daily News» լրագրում: Նա-
մակը չէ պատկանում մի մասնաւոր մար-
դու, պատահական մի անձի: Նամակի հե-
ղինակն է Տայերին օգնող կանանց ընկե-
րութեան պատուաւոր քարոզչու արիկին
Մերի Հիքսօն, նա, որ այնքան աշխատել է
հայերի համար նպաստ ժողովուրդ և քոքը
Արիա ուղարկելու: Միտարի Հիքսօն իր այդ
նամակում լուրջ կերպով խօսում է Տայերի
զաղթականութեան մասին: Մենք յարգում
ենք տիկնոջ զգացմունքները. Թիւրքաշայե-
րը երախտապարտ են նրան այն մեծ ջան-
քերի համար, որ նա յոյժ տուեց ժողո-
վարարութեան գործում: սակայն թող զի-
տեսայ տիկնոջ, որ նա իր առաջարկած
միջոցով անդիտակցարար միայն փնտս է

ցանկանում Թիւրքաշայերին և նրանց ա-
ռաջ բաց է անում կորուստի մեծ դուռն:
Միտարի Հիքսօնի նամակի բովանդակու-
թիւնը հետեւեալն է.

«Պարոն. Ներքինութիւն եմ խնդրում, որ ձեզ
և ձեր ընկերացիներին պէտք է զբաղեցնեմ մեր
գործի մի նոր ձեւաւորութեան մասին զեկու-
ցանքով: Շատերը—մի ուրիշ կարող էր զուցէ
ասել ամենքը—այն մարդկանցից, որոնք հետա-
քրքրված են այն ազգի կեանքով, որին Եւրոպան
թողեց իր սեփական վիճակին Արիական թիւր-
քայում, զգացել են, որ հայերի համար միայն
զաղթականութիւնն է մնացել իբրև միջոց ազա-
տելու այդ ժողովուրդը իսպառ ջնջվելուց: Օ-
րիւրը կիմբը Վանից ասրիկ 28-ին ուղարկած
իր մի նամակի մէջ գրում է հետեւեալ տողերը.
«Մենք այստեղ աւելի և աւելի համոզվում ենք,
որ նրանց միակ իրկութիւնը—գաղթականութե-
ն է. և եթէ ձեր կառավարութիւնը պաշա-
տանի այս միտքը, եթէ փող ժողովի զաղթելու
ծախքերի համար, ես կարծում եմ, որ մենք մի
յաւիտեական բարիք արած կը լինենք նրանց»:
Այս կարծիքը հաստատում են բոլոր տեղերի ա-
մերիկական միսիոնարները: Ես կարող եմ նոյն
իսկ ասել, որ մի այդպիսի նախագիծ արդէն ի-
րագործվելու վրայ է և կաղթվում է մի մասնա-
ժողով, որի նպատակն է հայերին միջոց տալ
տանջանքի տեսաբաններից հեռու սկսել նոր
կեանք: Հարեւոյնքանակների ընկերութեան» յայտ-
նի անդամներից մէկը, Էլքմոնթ Ուրայթ Բրուկս,
խօսաւայել է լինել զանազան և ուրախութեամբ
կենդանի նախաձեռն, նշանակելով «հայկական
օգնող ֆոնդի» անունով: Մենք մեր ձեռքին ու-
նենք այս բոլորի նոր հրատարակվող մի գրքի
առաջին թիւից, որը վերաբերվում է նոյն գոր-
ծին: Գրքի հեղինակը, Ռիլիարդ Հոուարդ, որ եր-
կու անգամ մտել է անգլիական տեղերի խորհուրդ
և սարսափանքից շատերին ակամատու է եղել,
սպազնու է իր աշխատութեան միայն մի իննե-
րորդ մասը, միւս տիւ մասերը գեղեցիկ տպագր-
ված: Այդ գրքի մէջ առաջ է բերված զաղթեց-
նելու ծրագիրը և յայտնված է, որ Նիւ-Երկու
կաղթված է մի մասնաժողով, որի անդամները
Ամերիկայի նշանաւոր անձնաւորութիւններիցն
են: Միտարի Հիքսօնը և մենք մեր արիւնքակից աղգու-

թեան այս մարդակը գործին, և աշխատենք ա-
զատել գոնէ մի մասը այն տանջված ժողովրդի,
որի ցանքեր մի նախատիք է զաղթեցնելով
ամեն մի երկրի համար: Ինչ վերաբերվում է վա-
նում բաժանվող նպաստներին, նրանք չարու-
նակվում են և կը բաժանվեն, քանի կարիք կը
լինի: Մենք ժողովել ենք և ուղարկել օրիւրը
կիմբը մօտ 10,000 ֆունտ ստերլինգ»:

Տիկին Մերի Հիքսօնի այս նամակից ե-
րևում է, թէ որքան հեռու է գնացել
Թիւրքաշայերի զաղթականութիւնը աշու-
ղեցնելու ծրագիրը, և արդէն պատրաստ են
նոյն իսկ մասնաժողովներ այդ նպատակի
համար մշտապէս գործելու և դրամական
միջոցներ հայթայթելու:

Վերին աստիճանի տխուր և ցաւալի ե-
րկայի է, որ բարեհաջակ անձեր, մար-
դարարութեան և քրիստոնեաների պաշտ-
պանութեան զգացմունքից զրկված, անկեղծ
կերպով ցանկանում են իրագործել մի ծը-
րագիր, որ պէտք է լրացնի այն չարիքնե-
րը, որոնց ենթակայ է Թիւրքաշայը իր
թշուառ հայրենիքում: Թիւրքաշայ հայերը
ցանկանում են ապրել իրանց հայրենի գիւ-
ղերում և այնտեղ ապահովել իրանց կեան-
քը և աշխատանքը: Նրանք մտադիր չեն
զաղթել ընդի հայրենիքից, որի հետ կապ-
ված են ամբողջ դարերով: Այդ ժողովուրդը
ցանկանում է ապրել իր երկրում և նրան
չհնայնել ու ձուլալու: Օգնեցէ նրան իր
երկրում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԱՐԾԻՐԸ

«Երբէք» 1876 թւից ի վեր—ասում է Ֆրան-
սիական «Temps» լրագիրը—հօրիզօնը ամբողջ
արեւելքում այնքան մօայլ չէ եղել, ինչպէս
այժմ: Իրերի վիճակը Թիւրքիայում օրէցօր աւե-
լի է ծանրանում և անկարելի է սարսափելի

վերահաս ճգնաժամի առաջն առնել, եթէ իսկօյն
արագ և արմատական միջոցներ ձեռք չառն-
վեն»:

Եւ ճշմարիտ, երբեք զաղաքական աշխարհի
կացութիւնը այնքան ծանր և վտանգաւոր չէ ե-
ղել, ինչպէս այժմ: Կրեմլն դեռ չառ հեռու է
խաղաղվելուց. Մակէդոնիան սպասում է դառ-
նալ կուռի նոր ասպարէզ քրիստոնեաների հա-
մար Բ. Դրան դէմ, և բուլղարներին, յուններին,
սերբերին և վալախներին մրցութեան համար մի-
մեանց դէմ: Հայաստանը, որի վերքերը դեռ ա-
րիւնալից են, խուլ եւման վիճակի մէջ է գտնը-
վում: Հաուրանը կատարեալ քաղաքային պատե-
րազմի դաշտ է ներկայացնում և իրանանք չու-
տով կը վարակի նոր անտու. Արաբիան յուզ-
վում է և գուցէ պատրաստվում է վաճապետա-
կան ֆանատիկոսութեան և Մէքքայի խալիֆի
հոգեոր իշխանութեան մի վտանգաւոր դաշնակ-
ցութիւն:

Եւ այդ այն ժամանակ, երբ եւրոպական դիպ-
լոմատիան արիւն քրտինք է թափում պահպա-
նել հռչակաւոր status quo-ն, երբ նա իր բոլոր
ջանքերն ուղղում է դէպի մի նպատակակէտ—
գոնէ դրանով է բացատրում նա իր բռնած հա-
կամարդաւորական դիրքը.—այն է՝ մի սարսափե-
լի, արիւնահեղ միջազգային ընդհարման առաջն
առնել և ընդհանուր խաղաղութիւնը վտանգի
չենթարկել: Այլ եւ ոչ ոք համար կտակաւ
տեղ չը կայ, որ այդ վիճակը զարհուրելի է,
որ Թիւրքիան պարզապէս հետնում է մի որոշ և
նախամտածված ծրագրի—ջնջել քրիստոնեայ
տարրը Փոքր-Ասիայից: Որքան էլ եւրոպական
մեծ պետութիւնները ի նկատի ունենան իրանց
անձնական շահերը, որքան էլ նրանք կամենան
պաշտպանել օսմանեան կայսրութեան չանկա-
խութեան և ամբողջութեան ձեռնամուխ չը լի-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՐԻՒՍԻՑԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, յուլիսի 22-ին

Վարչական ժողովներու հրաժարման խնդրից
յետոյ,—որուն վրայ ընդարձակ տեղեկութիւններ
տուած եմ արդէն,—հիմակ օրուան խնդրին է
«Հայրենիք» լրագրին տնօրէն Յովհաննէս Դանա-
զարի բանադրութիւնը, «Հայրենիք» բոլորովին
խախտման դատաւարութիւնը և տպարանին
ալ կառավարութեան կողմէ փակուած: Յուլիսի
11-ի հինգշաբթի օրընէն սկսած,—թուական պ.
Դանազարի ձեռնադրութեան,—թուրք ոստիկա-
նութիւնը և Դրան Մամուլի տեսչութիւնը միա-
ցուցին իրենց ջանքերը՝ ջնջելու, կործանելու
համար «Հայրենիք»-ը, ժողովրդի սիրած այդ լրա-
գիրը, որ, չորսը վեց ամիս թուրք կառավարու-
թեան քմահաճոյքներուն հորձիկ զաղած մնալէն
եաքը, հազիւ թէ ամիս մը կար որ հրատարա-
կուելու արտօնութիւն ստացած էր:

Այս ամէնքը քանի մը օրուան մէջ կատարուած,
վերջին ծայր յուղեցին ոչ միայն «Հայրենիք»-ի
համակրողները և ընթերցողները, այլսինքն Պոլ-
սոյ և գաւառներու բոլոր ողջամիտ հայու-
թիւնը, այլև խորունկ ցաւ պատճառեցին
Պոլսոյ եւրոպացիներու շրջանակին մէջ, ուր
բաղձաթիւ ծանօթներ և բարեկամներ ունի
պ. Դանազար: Թուրք կառավարութեան նը-
պատակն ալ այդ էր արդէն. նախատել, վիրաւո-
րել հայերը, պ. Դանազարի պէս ժողովրդական
անձնաւորութիւն մը բանադրելով և Թուրքիոյ
հայերուն սիրելի եղած միակ թերթը ջնջելով սոս-
կացնել ու անհաւելել հայերը: Մէկ խօսքով, «Հայ-
րենիք» խախտումը շարունակութիւնն է կախա-
ղանին, ինչպէս այս վերջինը շարունակութիւնն էր
ջարդերուն: Ան կը տեսնէր, որ թուրք կառավա-
րութիւնը վարկեան մը անգործ նստած չունի:

«Հայրենիք»-ի անօրէնքն բանադրութեան և
թերթին խախտման աղղած յուզումը այնքան
մեծ էր, և զանազան շրջանակներու մէջ պատ-
մուած իրողութիւնները և զրոյցները անբաժնի չը-
վիթ և տարօրինակ էին, որ հազիւ թէ ժամանակ
կունենամ այս մասին ստոյգ տեղեկութիւն մը
բաղել: Պ. Դանազարի ձեռնադրման առաջին
շաբաթօրէն եղեր է նամակ մը, զոր Նամիս զը-
կուած հայ ուսանողներին մը գրել է պ. Դանա-
զար անցնալ սեպտեմբերի արեւելից դէպքե-
րուն տպարարութեան ներքեւ, թէպէտ ոչ ոք զի-
տէ այդ նամակին ստոյգ պարունակութիւնը, սա-
կայն կը զրուցուի թէ պղծիկ անարկութիւններ
կան եղեր օրուան դէպքերուն վրայ: Մինչև հի-
մակ չէ կրցած հասկացուիլ թէ այդ նամակը ինչ-
պէս անցած է ոստիկանութեան ձեռքը: Նամակ
ըրկուած օրիորդներէն երկուքը,—թերթի մասի
յաւակնուող տիպարներ,—երկու ամիս առաջ Պո-
լսի վերադարձան, պարսկական բան սորվելու մեծ
ձանձրութիւն ապրանելու համար իրենց զուրկելու
Այդ օրերը լուր մը ելաւ թէ ոստիկանութիւնը
մաքը ելած ատենին այդ օրիորդներին վրայէն
գրաւեր է թղթեր, որոնց մէջ կը գտնուի եղեր
նաև պ. Դանազարին այդ նամակը:

Սակայն, ինչպէս կը տեսնէր, «Հայրենիք»-ի ան-
ընդ երկու ամիս ետքը միայն ձեռքակալուեցաւ.
ասիւ կը հետեցնեն շատերը, թէ այդ հայ
օրիորդները բաւական յայտնի պատճառներու
համար, սեփական անձերու միջոցաւ ոստիկա-
նութեան ձեռքը հասուցած են պ. Դանա-
զարին այդ նամակը, որ չի կրնար իբր
յանցապարտութեան ապացոյց ծառայել, նոյն
իսկ եթէ սեպտեմբերի դէպքերուն վրայ անհաւել-
թիւններ պարունակէ, քանի որ այդ օրերը նոյն
իսկ Պոլսոյ մէջ հրատարակուող զանազան թեր-
թեր հրատարակելիքին թէ դէպքեր և արեւմտա-
ղութիւններ պատահած են: Ամէն պարագայի մէջ,
ազգապէս elique-էն քանի մը կեղտոտ անձեր, և
մասնաւորապէս ոստիկանական յայտնի խորհրդա-

կան աղբյուրով վաճառ վարդապետ Տէր-Մինա-
սեան ասելի կամ նուազ դեր ունեցած են այս
գործին մէջ: Բաւական արժանաւորատ աղբիւր-
ներէ լսեցի նաև որ պ. Դանազար ամբաստա-
նուած է ուրիշ աւելի ծանր յանցանքներով, որոնք
բաւարարին երեսակցական են և կրնամ ապահով-
ցնել ձեզ որ պիտի չլինան ապացուցուի: Այդ
անհեթեթ ամբաստանութեամբ թուրք ոստիկա-
նութիւնը կուէ որ պ. Դանազար պարագլուխը
եղած ըլլայ յեղափոխական կուսակցութեան մը:

Պ. Դանազարին զառ ձեռքակալուած և բան-
արկուած են նաև շատ մը պատուաւոր և ան-
մեղ երիտասարդներ ոչինչ կապածանքներու հա-
մար ու ենթարկուած են չարախառնութեան: Նա-
զըմ փայային սպանդանոցին մէջ: Ասոնց մէջ կը
լինէր Պալաքեան, Ալեքիսեան, Տոտաքեան,
Զարմայր, Զոթիկեան և ուրիշ հայ երիտասարդ-
ներ, որոնք թիւ շատ դիքը ունին և ընտանիքի
դաւալներ են: Հակառակ իրենց բացառական ան-
մեղութեան, ոստիկանութիւնը ոչ միայն չուղեր
արձակել զանոնք, այլ և իրատ տանջանքներու
կենթարկէ: Արտաւան Հովեւեան անուն երիտա-
սարդ մը, որ ամիս մը առաջ բանտարկուեցաւ և
վերջերս արձակուեցաւ, այնքան սաստիկ տան-
ջանքներ կրեց որ հիմակ խելազգարած՝ Շիշլիի
Ֆրանսական հիւանդանոցը կը գտնուի Տանջելու
պաշտօնը աւելի հայ քրտները կը կատարեն.
Իսեղծ ենթակականը նկուղներու մէջ ինչեցնելով
կը ծեծեն հաստ գաւաղաններով, որոնց վրայ հա-
յերէն տառերով փորագրուած են «հայկական
աղաւթութիւն» բառերը, ինչպէս տեղեկացայ բան-
տէն գրուած նամակէ մը:

Կառավարութեան անանկութիւնը երկաշուղ
կատարելութեան կը հասնի Գիտար չէ գաւա-
կելը, որ այս ամբողջական անանկացումը կրնայ
ներքէ ենթակականը նկուղներու մէջ ինչեցնելով
կը ծեծեն հաստ գաւաղաններով, որոնց վրայ հա-
յերէն տառերով փորագրուած են «հայկական
աղաւթութիւն» բառերը, ինչպէս տեղեկացայ բան-
տէն գրուած նամակէ մը:

Երկու խախտութիւնը կը պարտին ոստիկանե-
րով «Անտուրի» վրած իւրաքանչեւ աղօթատե-
ղիներուն չիտութեան համար զրամ հաւաքելու!
Կառավարութիւնը, օրինակի համար, ստիպուած
է սա տեսակ խնայողութիւններու դիմել Պա-
տերադական նախարարութիւնը օրոյնք է, որ
զինտորներու հազուադէպ այսուհետ առանց
ուսանցի (épaulette) կարուի, մէկ ուսանցը
մէկ դրուչի ծախք մը պատճառելուն համար:
Ոստիկաններուն ուսանցը աւելի սուղ է, 3
գրուչ, ստոր համար Պոլսոյ ոստիկաններուն չա-
տերը առանց ուսանցի կը պարտին հիմակ:

Ոստիկանութիւնը անցեալ օր թուրք յեղափո-
խականի մը տունէն գրաւեց տիկնամիթի երեք
ուսմը: Թուրք յեղափոխականներու մէջ զոյու-
թիւն ունեցած ծայրայեղ դիտաւորութիւններու
յայտնութիւնը սարսափ պատճառած է Սուլթա-
նին կառավարութեան: Որպէս պէյ անուն նշա-
նաւոր թուրք յեղափոխական մը, զոր պէտք չէ
չիտիլ թարիղ հրատարակուած «Մէշլէթի»
թերթին խմբագիր պ. Անվա Րիզայի հետ,—
ինչպէս չիտիլած էին եւրոպական թերթերը,—
Հոռոզու կողմից ժամագրութեան մը գաղած պա-
հուն՝ ձեռքակալուել և Պոլսոյ բերուել է:

Հայաստանի զանազան կէտերէն հասած նա-
մակներ տեսայ, նորագոյն թուականներով, ո-
րոնք անհանգուրժելի կացութիւն մը կը պատ-
մեն: Նիւստայի ջարդին օրերը շատ զաղաքնե-
րու մէջ թուրքերը պատրաստուել են յարձա-
կում ընել հայերուն վրա, ժողովուրդը չարթի-
ներով սարսափի մէջ անցուցել է: Եթէ կրնանք
հաւատալ ձամբորդներու զրոյցներուն, ամիս մը
առաջ Սամսոնի ձամբով Պոլսէն քորուուած 400
հոգիէ բաղկացած հայերու խումբը, Նիւստայի
չրջականները հասած ըլլալով ջարդին օրերը,
ամբողջապէս սպանուելու է: Հայաստանի մէջ
թուրքերը սկսած են արգելել հայերը՝ քաղել
իրենց արտերը:

նեկու» հռչակաւոր ֆորմուլան, բայց—ասում է «Temps» լրագիրը—այժմ համազօր կ'են, որ կարելի է պահպանել այդ անկախութիւնը՝ միայն զոհելով մի քանի մասն նրա ամբողջութիւնից, կամ պահպանել ամբողջութիւնը միայն մի որ և է սահման դնելով նրա անկախութեանը:

Մի խօսքով եւրոպական դիմադրական հասել է այն համադրուիքին, թէ պէտք է կտրուկ և ազդու միջոցներ ձեռք առնել աւելի փառաբանութեան չը ստեղծելու համար: Եւ որովհետև մի քանի նշաններով երևում է, որ ուսուցող կառավարութիւնը մտադիր է մի աւելի գործունեաց քաղաքականութեան ձեռնարկել Արևելքում, ուստի ֆրանսիական մամուլը լուրջ կերպով զբաղւում է այն հարցով, թէ ինչ պէտք է լինի ֆրանսիայի բանակի ընթացքը այդ դէպքում: «Ֆրանսիան դիմադրող չի հանդիսանայ, ասում է «Temps» լրագիրը, եթէ Ռուսաստանը Յարի արտի չարժան կամ աւելի գործնական պատճառներով ազդեցութեան տակ, կը վճռի իր վրա առնել Արևելքում մի աւելի կըտրուկ քաղաքականութեան ձեռնարկելը: Չը մտահանք, որ ֆրանսիան, ինչպէս պատմում են շատ լրագիրներ, մի ուրիշ աւանդութիւն ունի, որին պէտք է հետևի Արևելքում և որից նա չէ կտրուկ ձեռք քաշել, առանց վնասելու իր բարոյական հեղինակութեան՝ արևելեան բրիտանիայ ազդեցութեան աչքում:»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օ Բ Ե Յ Օ Ր
XXXV

«Մշակի» էջերը թոյլ չը տուեցին մեզ՝ ժամանակին պատասխանելու մի բարձրաստիճան հոգեորականի յօդածին, գրած Կ. Պօլսկի և ուղղած մեր մի նկատողութեան դէմ («Մշակ» № 47), որը վերաբերում էր Երուսաղէմի պատմաբանական փոխանորդ Սեֆէրեան արքեպիսկոպոսի հարաբերութեան: Պ. Աբգար Յովհաննիսեան, հիւրընկալելով իր օրգանի մէջ այդ յօդածը, որի հեղինակը քաջաբար թաղելի է «Անկողնակալ» (?) ծածկանունով տակ, հարկաւոր է համարել թաղելով յօդածագրին՝ նուրբել հետեւալ ներքոյը. «Այս յօդածը պատկանում է մի բարձրաստիճան հոգեորականի, որ մեծ ծառայութիւններ է մատուցած թիւրքիայի հայերին և յայտնի է իր անշահաւէր գործունէութեամբ:» Մենք կատարելապէս հաւատում ենք, որ այդ յօդածը յիշատի պատկանում է մի բարձրաստիճան հոգեորականի, այն պարզ պատճառով, որ այժմ ամեն տեսակ արուարդներ դուրս են բղկում գլխաւորապէս բարձրաստիճան հոգեորականների բերանից և գրչից, բայց որ այդ բարձրաստիճան հոգեորականը մեծ ծառայութիւններ է մատուցած թիւրքիայի հայերին և յայտնի է իր անշահաւէր գործունէութեամբ:—այդ բանին, թող ներքի մեզ պարզ ասել, բոլորովին չենք կարող հաւատալ, որովհետև Մարգարիտ եպիսկոպոս Օրմանեանի ջանքերով Բրուսայի ալ և Եղիպտոսի պատգամաւոր նշանակված Աբգար Յովհաննիսեան՝ նոյն գեղեցիկ անականներով է պատել այնպիսի բարձրաստիճան հոգեորականների, ինչպէս Աբգրեան, Գիմաթեան և ընկ., և այնպիսի լանջահասէր գործիչներին, ինչպէս Նուրեան և ընկ.:

Դառնանք խնդրին Սակայն նախ քան Կ. պօլսկից բարձրաստիճան հոգեորականի ահագին, մի քանի էջերից բաղկացած, նոյն իսկ եպիսկոպոսական փարաջայից երկար յօդածին պատասխանելը, պարզեք ենք համարում նկատել ահա թէ ինչ: Շատ անախորժ, և պէտք է խոստովանենք, վերին աստիճանի լանդհոնական յիւթ է մեր հոգեորականների մասին գրելը: Գրողը շատ պարզ, շատ չօղակելի կերպով զգում է, որ մեր հոգեորականութիւնը ընդհանրապէս, և նրա զանազան ներկայացուցիչները մասնաւորապէս, իրանց բարոյական յատկութիւններով, իրանց մտաւոր պատրաստութեամբ և գործունէութեամբ այնքան ստոր աստիճանի վրա է կանգնած, որ իսկապէս նրանով չը պէտք է զբաղվել, և նրան չը պէտք է նուրբել մամուլի էջերը: Մեզ թւում է, որ ամեն մի հայ գրող և հրապարակախօս (մենք չենք խօսում վեղարապաշտներ մասին), երբ այսպէս թէ այնպէս ստիպված է լինում գրիչ վերցնել մեր հոգեւոր հայրերին, մասին գրելու, անխուսափելի կերպով զգում է, որ ինքը իջնում է գրողի բարձրու-

թիւնից, և զբաղվում է մի այնպիսի տարրով, որից ոչինչ չի գուրս գայ, և որը անընդունակ է կանգնելու այն տեսական բարձրութեան վրա, որ ընդունված է քարոզել հայոց գրականութեան և մամուլի մէջ: Սակայն, ի մեծ ցաւ հայ ժողովրդի, հանգամանքների բերմամբ, մեր հոգեորականութիւնը այնպիսի մեծ իրաւունքներ է յատկացրել իրան, և բունելով իր ձեռքի մէջ ժողովրդի կրօնական, ամուսնական, դպրոցական կեանքի դեկը, այնպիսի վճռական դեր է կատարում, որ մամուլը ստիպված է զբաղվել նրանով: Ահա մի աւելի ամբողջ թեմի դեկը տրված է մի այնպիսի վեղարաւորի ձեռքը, որի անունը, իբրեւ ոչ-պաշտական անձի, անպատուութիւն կը լինէր նոյն իսկ յիշել մամուլի էջերում, բայց որի մասին լրագիրը ստիպված է անդադար գրել, յիշատակել, որպէս զի գէթ մի փոքր պարտաճանաչութիւն ներշնչի նրա ուղեղի մէջ: Մի ուրիշ տեղ որ և է անաղին դպրոցական հիմնարկութեան մէջ ոտք դրած՝ անկարգութիւններ է սնում մի այլ այնպիսի հոգեւորական, որի փարաջան հանած ժամանակ չը գիտենք ինչ պաշտօնի պէտք կարող էր գալ.—բայց և այնպէս, դրանով էլ պէտք է զբաղվեք, որովհետեւ եթէ չլինէր մի-մի քար չը գտէր, նա բոլորովին կարող է հոտել, ասականվել: Վերջապէս աւելի բարձր վարչական գործերում, ինչպէս դիւրոյը, Կ. Պօլսկի հայոց պատմաբանական գահի վրա, նստեցնում է մի այնպիսի սեւազուլ, որի առաջին յատկութիւնը՝ որ և է արժանաւորութիւնը չունենալն է,—և մամուլը էլի ստիպված է զբաղվել դրանով, որովհետեւ նրա կարեւոր պաշտօնը ընդունակ է ամեն ինչ տակն ու վրա անել:

Եւ այն և այլն, և այլն: Իբր կրօնական ժողովուրդը, հայոց ազգը ինքը դարձի ընթացքում իր կեանքի ամբողջ դեկը տուեց հոգեւոր դասակարգին, և այժմ էլ նոյն դրութեան հետեւի, բուն հայկական կեանքի ներքին յիշաններում՝ չը կայ համարեա և ոչ մի գործ, որտեղ բազմած չը լինի վեղարի ներկայացուցիչը, որի մէջ մասն չունենայ այն դասակարգը, որը կոչված է փակվելու խոցերում և աղօթելու հօտի հոգու փրկութեան համար: Այդ ընդհանուր նկատմանից յետոյ,—որը մեզ մի քիչ հեռու տարաւ,—դիմենք բարձրաստիճան հոգեորականին: Կ. Պօլսկի մօտերից հնչող աղաղակներն են.

ՄԱՍՆԵԱԳՐՈՒԹԻՒՆ

«Ինչ ձեռն աւորը»—պօէմա Շոթա Բուսթաւէլիի: Համառօտեց Թ. Միրիմանեան. թիֆլիս, 1896.

Վաղուց հարկաւոր էր, որ հայոց գրականութիւնը ծանօթանար վրաց հռչակաւոր պօէմայի հետ: Պ. Միրիմանեան բոլորովին չէ կարողացել կատարել մի լաւ միջնորդի դեր այս գործում: Նրա տուածը—«Ընդհանուր փրկութեան է միայն, չոր կմախքը, որից պոկված են միմեք ու արիւնը, հագին Հայ ընթերցողը մի կատարեալ հիասթափման մէջ է ընկնում, երբ առանձին հետաքրքրութեամբ ձեռք առնելով հռչակված պօէման, գտնում է նրա մէջ մի սովորական հեքիաթ միայն. ընթերցողը չէ հասկանում թէ էլ ինչու այնքան գովված է «Ընդհանուրը», ինչու նրա մասին խօսում են նոյն իսկ եւրոպացիները: Այդպիսի թիւր և անպատու կարծիք կաղմել էր տալու համար պէտք էր չը բաւականաչափ բովանդակութիւնը պատմելով. հարկաւոր էր հայ ընթերցողին էլ ճշտակել տալ այն գեղեցկութիւնները, որոնք XII դարից մինչև այսօր գերել են վրացի ընթերցողներին:—Չէ կարելի ասել որ բոլոր կրօնական գործերն ունեն ձոյն և մեծ բովանդակութիւն: Գործի չընդունելը շատ անգամ թաղված է այն ճարտարութեան մէջ, որ հնորհում է արուեստագէտին՝ հիւսուածքը հրաշակեցողութեան մէջ: Այդպէս է և «Ընդհանուրը»: Բայց Բուսթաւէլին չը կայ մեղ համար. մենք չենք տեսնում նրա ինքնուրույնութիւնը, մեղ չէ յափշտակում նրա նկարագրական տաղանդը. նրա ոճը, նրա հոգեկան յոյզները մեղ համար բոլորովին անձանօթ են: Մնացել: Չոր ու ցամաք բովանդակութիւնը կարող էր նոյն իսկ Բուսթաւէլիի սեփական ստեղծագործութիւնը չը լինել. էլ ինչպէս պիտի մենք գործ ունենանք ստեղծագործող հոգու հետ, ինչպէս պիտի հիացնէ մեղ այն կեղտա-

կան ձուլութիւնը, այն բանաստեղծական կրատելը, որ այնքան հռչակել է այդ պօէման համար, ուսողը այնպէս է կարծել, թէ իր համար պարտաւորական չէ տալ հայ ընթերցողին գործի մասին գեղարուեստական հասկացողութիւն: Այդտեղ նա մղորդել է: Ուսանաւորի գեղեցկութիւնը կարելի էր պահել և արձակի մէջ, բայց դրա համար, ի հարկէ, պէտք էր շատ աշխատել: Կրօնական գործերը այդպէս համառօտել մի և նոյն է թէ անգամահատել, ոչնչացնել: Պէտք է այդպիսի գործը փոխադրել, վերածել արձակ գրութեան: Մի քանի փորձեր շատ լաւ աշուղդել են: Որինակ, սըր Էլլինի գեղեցիկ պօէման, որի անունն է «Ասիայի լոյսը» (Բուգրա) թարգմանված է ռուսերէն՝ արձակ լեզուով և ներկայացնում է արձակ բանաստեղծութիւն: Այդպէս է վարվել և պ. Գիւլաղան «Շահնա» մէջ: մի քանի կտորների հետ: Եւ այսպէս, պ. Միրիմանեանը չէ կարողացել հարողել մեղ Բուսթաւէլիի հոգին. «Ընդհանուրը» շարունակում է անձանօթ մնալ մեր ընթերցող հասարակութեանը: Հետաքրքրական են համառօտողի հաւաքած տեղեկութիւնները Բուսթաւէլիի մասին: Երեսուն չորս տարի առաջ, «Ընդհանուր» ամսագրի մէջ, տպվեց «Ընդհանուր» մի մասի թարգմանութիւնը թիֆլիսի բարձրագույն. նա այժմ էլ կարողացել է արտօնաբերել: Երեսուն չորս տարվայ ընթացքում ոչ ոք չը կարողացաւ տալ պօէմայի թարգմանութիւնը: Ո՛ւր են մեր բանաստեղծները:

ՆԱՄԱԿ ԱԼԷԿՍԱՆԴՐՈՎՈՒՅ

Անտանի յոգեբից յետոյ, վերջապէս եղանակը այս օրերս հովաքաւ, երբ սկսեցին տեղալ յորդ անձրևներ: Հունձը այս տարի, հնորհիւ վերջին օրերս եկած անձրևների, շատ լաւ է. հացի բերքը արեւմտեան Շիրակում աչող է:

Կարս-Թիֆլիսեան երկաթուղու շինութիւնը եռանգով առաջ է գնում: Գծի վրա աշխատում են մօտ 10,000 հոգի: Տրապիզոնի նահանգի հազարաւոր յոյներ թափված են այստեղ և փրկվելով աշխատում են: Կրանք չեն աշխատում որպէս մշակ, այլ որպէս վարպետ: Այդ մարդիկ, որ վարժ են որմնադրութեան մէջ, շատ լաւ ունիկ են ստանում, օրական 2—3 ռուբլի, մինչև գեւ հայ մշակները մեծ մասամբ հողային աշխատանքների մասունքն են գործում, ստանալով 50—70 կօպէկ: Բացի յոյներից կան բաղաժիկ իտալացի վարպետներ, որոնք աշխատում են: Չաճուռ գիւղի մօտ գտնված տօնելում: Խաղաղի վարպետներն աւելի ունիկ են ստանում քան թէ հայերը և յոյները: Երկաթուղին, ասում են, պատրաստ կը լինի 1898 թիւ սկզբին:

Բացի երկաթուղային ճանապարհների շինութիւնից՝ այս տարի մեր քաղաքում, Ախուրեան գետի եղջերան, շինվում են խոշոր գործանոցներ, հեծեալ ջրբերի համար: Այդ շինութիւնների վրա էլ աշխատում են բաղաժիկ հայ վարպետներ և հազարաւոր մշակներ:

Մի պարոն, Ստեփան Յովհաննիսեան, Կովկասի ուսումն. հոգաբարձուի հրամանով՝ յուլիս ամսի 1-ից բացել է մեր քաղաքում ուսումնարանը՝ պանսիօն: Դա առաջին պանսիօնն է, որ բացվում է մեր քաղաքում: Վճարն է ամսական 5 ռուբլի: Դա, իհարկէ, չէ կարող բաւարարում մանուկներին:

Շիրակեցի

ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՅԻՅ

Այս ամսի սկզբին հացի արտերը այն զրուլութեան մէջ էին, որ նայելիս մարդ փառապաշտ էր: Երկու ամսվայ չորութիւնից, ճօնաղը և «մրկը» խեղդել էին հացաբոյսը: Այդ դէպքից անհրաժեշտ ժողովուրդը մտածում էր՝ մի գուցէ այս տարի էլ նախկին տարիների նման հունձը վատ լինի: Ուսմիկ ամբողջ, վախեցած անցեալ տարիների անբերութիւնների, սկսեց եցաւման ժամն անել, ժամաղներ մօրթել, դիմեց այս և այն օգնութեան, «Սկանի» սուրբ նշանը չըբերեց գիւղից գիւղ, «Գեանդունց» կարմիր աւետարանը՝ եկեղեցու բեմից ցած բերվեց և այդ բոլորը ամբողջ կրօնական զգացմունքը լարելու, ջերմեանդութիւն ներշնչելու:

և նրա կրօնական վեհութեամբ Աստուծու սիրտը քաղցրացնելու համար... Սակայն անձրև չը կայ ու չը կայ: Երբեմն երբեմն անձրևում էր, միմիայն այնպիսի սարահարկերում, որտեղ իսկի կարեւորութիւն էլ չը կար անձրևի: Դալ տափարակ հողաբաժինները, որտեղ տարածվում են բոլոր ցանքերը, պապակում էին մի կաթիլ ջրի համար... Մի խօսքով՝ ամբողջ բուսականութիւնը՝ նոսր, կարճ, դեղնած և վտիտ հասկերով՝ երայտից սպառնում էր արմատի վրա չորանալ—ոչնչւնալ...

Սակայն վերջին անգամ, յուլիսի կէսին, տեղացող յորդ անձրևից հացաբոյսը իսկոյն փոխեց իր գոյնը.—սկսեց նորից կանաչել, նորից թարմանալ: Առաջում, երբ դեռ չարունակվում էր եւրաշտութիւնը, հացի արտերում չըբերվում մարդու կօշիկները կարմիր էին ներկվում ժանգից: Իսկ այժմ անձրևները մասամբ ողողեցին այդ ժամաց հիւսնութիւնը: Իսկ «մրկը» անբաժանելի է հացահատիկներից: Ընդհանրապէս վերցրած՝ այս կողմերի հացաբոյսը անաչող է երևում, որից այնքան էլ յուսալի չէ սպասած առատութիւնը: Բայց այնու առնադիմ, եթէ մի երկու անգամ էլ անձրևներ տեղան, այն ժամանակ նորից կանաչած և թարմացած արտերի հացաբոյսը կարող է ուղղվել և ընդունակ լինել մասնաւոր արդեանքների: Գ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿԵՐ

Մեզ հայրերում են, որ վանի մէջ յայտնի գործող ամերիկացի օրերը Գիմաթեան երկու ուրիշ միսիօնարներին հետ հեռացել է վանից, և այս օրերս հասել է Բաթում, այնտեղից Ամերիկա գնալու համար: Օրերը Գիմաթեան եկել է Նոր-Բայազետի վրայով, վանի ուսուցչի հիւպատոսի օրնութեամբ, և այլ ևս մտադիր չէ վերադառնալ վան:

Այս օրերս մի խումբ վանեցիներ եկան Թիֆլիս: Դրանց մի մասը մտադիր է Կովկասում պարապմունք գտնել, միւս մասը ճանապարհ է ընկնում Ամերիկա՝ այնտեղ բազմ օրանելու: Դա տեղը նրանցից եկել են Նոր-Բայազետի վրայով:

Մեզ գրում են Էլմիանից, որ վեհափառ Կաթողիկոսը մտադրութիւն ունի յետաձգել միւս ունի օրհնութիւնը, որ պիտի լինէր սեպտեմբերի 26-ին: Նոյն տեղեկութիւնը ստացել է և «Тифлисскаго Источника» լրագիրը: Էլմիանում տիրող կարգերի մի նոր նմուշ է այդ փաստը.—պաշտօնապէս յայտարարեցին, որ միւս ունի օրհնութիւն պիտի լինի, հրաւեր կարգացին ամբողջ հայ հասարակութեան,—և այժմ էլ հանդիստ խղճով պատրաստվում են յետաձգել այդ կրօնական հանդէսը: Փոփոխամտութիւնը՝ առաջին յատկանիշն է այժմեան Էլմիանի:

Այս ամսին լրանում է Անդրկովկասեան երկաթուղու շինութեան 25-ամեայ տարեդարձը: Այդ առիթով, երկաթուղու գլխաւոր վարչութեան առաջարկութեամբ, իշխան Ա. Արզումանյան պատրաստել է Անդրկովկասեան երկաթուղու պատմութիւնը:

Կովկասեան ցէնզուրական կօմիտէտի անդամ, կրտսեր ցէնզոր Գ. Ս. Կարախանով երկու ամսով ստացած արձակուրդից վերադարձաւ և օգոստոսի 3-ից ստանձնեց իր պաշտօնը:

Եւրոպական Ռուսաստանի գործարաններից մէկը, Գետեհիօ, ուղարկել է Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան ցորեն քամելու մեքենաներ (ВЕНАЖ), որպէս զի ընկերութիւնը փորձեր անի այդ մեքենաների վրա և եթէ աղոյ հետեւեցնելի հասնի, յանձնարարի տեղական գիւղատնտեսներին: Ընկերութիւնը մտադիր է երկաթուղու զծի վրա մի կամ երկու կէտում փորձեր անել առաջիկայ աշան:

Մեր երկրի հեղեղները և նրանց հետ կապված երևոյթները ուսումնասիրելու նպատակով՝ Կովկասի Գիւղատնտեսական ընկերութիւնը կազմել է մի ծրագիր, որ կուղարկվի գիւղատնտեսներին և մասնագէտներին պատասխաններ ստանալու այն հարցերին, որ զգում են ծրագրի մէջ:

ԿԱՂՋՈՒԱՆԻՅՑ մեզ գրում են. «Յուլիսի 17-ին, գիշերվայ ժամը 11-ին, աղանաթի կապալառու Ջ. Զանգուպուրի մարդկից յարձակվում են վաճառական Բիշարանյանի վրա հին վրէժ լուծելու համար՝ վերջիններս միամիտ վերադառնալիս են եղել խանութից, ուստի միայն հովանոցներով են պաշտպանվել, մինչև որ հաղաթուրքները մի ծանր հարուածով զեւարին են գլորում Ա. Բիշարանյանին և վերջը մահացու կարծեցով, փախչում։ Այդ վայրենի վարմունքը այս անգամ հասարակութեան վրա շատ վատ տպաւորութիւն թողցնելով, մինչև անգամ առաջարկութիւն եղաւ հասարակական ժողով կազմել, և միջոց ձեռք առնել, որ գոնէ չը կրկնուի այդ տխուր երեւոյթը»։

ԹԻՖԼԻՍԻ Կուկիա թաղի ս. Աստուածածին եկեղեցւո միաբան խաչատուր քահանայ Տէր-Խաչատրեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Մշակի» 84-րդ համարում լոյս տեսաւ մի նկատողութիւն, այն մասին, որ Ներքին-Ազգայնի մի պարտն, Կարապետ Խաչատրեանց ազգանունով, դիմել է ինձ խնդրելով, որ գնամ և հաղորդեմ իր ծանր հիւանդ կնոջ, բայց ես մերժել եմ, պատճառ բերելով թէ գնում եմ նշան դրէք։ Դա ճիշդ չէ։ Համարտութիւնը վերականգնելու համար հարկ եմ համարում առաջ բերել իրողութիւնը. յուլիսի 19-ին, երեկոյան, խաչն ու աւետարանը և բոլոր պարագայքը վերցրած՝ ժամկէտի հետ միասին գնում էի օրինակատարութեան. ճանապարհին ինձ դիմեց մի փոքր երեխայ հետեւալ խօսքերով. «Մի օտար հիւանդ կայ, արի ճաշակիր»։ Կատարականցի որ ս. հաղորդութիւնը մօտս չէ, սղաւիւր, գնամ վերցնեմ և միասին գնամ հիւանդի մօտ։ Վերադարձայ եկեղեցին ս. հաղորդութիւնը վերցնելու, և երբ մի փոքր ժամանակից յետոյ հաղորդութիւնը ձեռքիս դուրս եկայ եկեղեցուց, երեխան այլ ևս չը կար։ Ապա երբ ամբողջ դիւրեւ, բայց ոչ որ չեկաւ—Ահա դա է զուտ ճշմարտութիւնը, որ լրատուն հաղորդել է բոլորովին փոխառած»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Անգլիական համայնքն էր ժողովի օգոստոսի 4-ի նիստում.

Բօլեւիստ, ինչ տեղեկութիւններ են ստացվել թիւրքական գնդապետ Մաղաթ Բէյի մասին, որի կարգադրութեամբ թիւրք զօրքը սպանել էր հայր Սալվաթօրին և նրա ընկերներին Նիշլիկալէի վանքում։ Ինչ տեղեկութիւններ կան Սիվասի վիլայէթի Նիկասար կոչված տեղի կոտորածների մասին, որոնց միջոցին մեռել են 340 քրիստոնեայ և 60 մահմետական, և ինչ միջոցներ է ձեռք առել Բ. Գուլը՝ վերականգնելու կարգը Նիկասարում և պատժելու կոտորածի զեկաւարներին։

Կըրդօն. Թագուհու կառավարութիւնը իմացել է, որ թիւրք զօրքերը այրել են Քրանցիսկանների վանքերը Նիշլիկալէում, Գիքոնիքում և Մուշուր Գերեխում և սպանել են վերջինի վանահայր Սալվաթօրին։ Ինչ վերաբերում է Նիկասարին, Տրապիզոնի մեր հիւղատուր հաղորդում է, որ յուլիսի 20-ին այնտեղի թիւրքերը ազդանշան ստանալով՝ կոտորել են հայերին և կողոպտել են նրանց տները։ Սիվասի մեր փոխ-հիւղատուր յուլիսի 22-ից հետագրում է, թէ տեղական իշխանութիւնը դեռ ոչ մի միջոց չէ ձեռք առել պատժելու չարագործներին։ Նա դարձրել է նախադասեալի ուշադրութիւնը այս տխուր հանգամանքի վրա. իսկ Կ. Պոլսի մեր ներկայացուցիչը առաջարկութիւններ կանի այդ մասին Բ. Գրանս։

Ռեստմանիստի դուրքը ստացել է Գիարբե-քիլի գործակալից հետեւալ նամակը, որ ուղարկված է յուլիսի 14-ին. «Վտառայ ձեր նոր ուղարկած 1000 ֆունտ ստերլինգը փոխ հիւղատուր Հոլարդիին հետ միասին, որ շատ զիւրաբանում է գործը, մենք առաջ ենք տանում մեր յանձնարարութիւնը, որը, պէտք է նկատել, այժմ աւելի քիչ կասկածանքի է հանդիպում թիւրք կառավարութեան կողմից, քան զարանը։ Ձարկնում մենք վերաշինեցինք այրված տները։ Դա շատ գործնական նպատակ էր։ Եթէ նոյնը

կատարվի ուրիշ տեղեր էլ և աջողութեամբ գլուխ բերվի, մենք նեցուկ կը տանք հազարաւոր անուոն մնացած մարդկանց, որոնց առաջին կանգնած է խառնաշուռ ձմեռը։ Մեզ դրամ է հարկաւոր ցորեն գնելու համար։ Յոյս ունեւ, որ ամառացած այս երկիրը մոռացութեան չի տրվի Անգլիայի մարդասիրութեան կողմից, օրական երեք պէնսը կարողանում է օգնել վեց հոգուց բաղկացած մի ընտանիքի»։

Սիվասից գրում են Ռեստմանիստի դուրքին, յուլիսի 15-ից, հետեւեալը. «Վերջին 12 ամսվայ ընթացքում 18,500 բողոքովին թշուառացած հայերի վրա ծախսել ենք 1200 ֆունտ ստերլինգ։ Առաջիկայ ձմեռը սակայն սպառնական է և դրամ է հարկաւոր շարունակելու կարիքները հոգալու համար»։

«Daily News» լրագրում, «Ճանապարհորդ» ստորագրութեամբ, զետեղված է մի նամակ Կ. Պոլսի պատրիարքի հրաժարականի առիթով հետեւեալ բովանդակութեամբ. «Պատրիարքը չէր կարող հրաժարական տալ. գաղտնիք չէ և այն, որ Ռեստմանիստը խորհուրդ է տուել նրան հրաժարական չը տալ։ Ոչ մի ուրիշ պետութիւն էլ չէր ցանկանալ այդ բանը։ Նա իրան յանձնել էր զեկաւարներին և պատրաստ էր կամ մնալ կամ հրաժարվել պաշտօնից, նայած թէ որ վճիռն է հարկաւոր հայերի համար։ Ռատկանութեան մի-նիստի սպառնալիքների նպատակը այդ հրաժարականի աջողցնելն էր, որովհետեւ իրերի վիճակի պատասխանատուութեան մարդը ծանրութիւնը բարդում էր պատրիարքի վրա։ Եւ շատ կը զարմանամ սակայն, եթէ հայոց ժողովի անդամները իրանց պարտաւորութիւններից կը չեղվեն։ Ինչ վերաբերվում է պատրիարքին, նա այն տեսակէտիցն է, որոնցից մարտիրոսներ են առաջ գալիս և նա ուրախութեամբ կը գնայ տանջանքի տեղերը, եթէ դա հարկաւոր է իր հօտի պաշտպանութեան համար»։

Պարիզի «Justice» լրագրի օգոստոսի 8-ի համարում (ն. տ.) կարդում ենք հետեւեալը. «Յայտնի է, որ թիւրքաց օստիկանութեան միւնիստր Նաղմե-փաշայի միտքն է ապացուցանել հայկական մի մեծ դաւադրութեան գոյութիւնը, որ պէս զի կարելի լինի արդարացիաբար ամբողջ մի ցեղի սխառեմտական ջնջումը։ Այդ միտքը համապատասխանում է սուլթան Աբդուլ-Համիդի որոշ ցանկութեան։ Չը նայելով Կրեաէի և Մակեդոնիայի գործերին, գրողների դեռ չը զբաղված ապստամբութեան, արաբների շարժման չէ-ճազում, զանաւարտի մահակութեան, սուլթանը դարձեալ բաւական ժամանակ է գտնում առաջ տանելու, Եւրոպայի մեղաւկցութեամբ, իր երազը»։

Կրեաական ազգային ժողովի պատգամաւորներից մէկը, Սպիրիտակոս, առեւել է Քրանսիական հիւղատուրին, որ սպանում էր կրեաացիներին, թէ կը կորցնեն Եւրոպայի համակրութիւնը, հետեւեալ ընտրույ պատասխանը. «Անցած երկու ամսվայ ընթացքում, երբ կրեաացիները լսում էին Եւրոպայի խորհուրդները, պետութիւնների համակրութիւնը նրանց վրա նստեց 50,000 բո-լորովին աղքատացած և 5,000 զոհ»։

Պատրիարքական տեղապահ Բարթոլոմէոս եպիսկոպոսը և հայ էֆէնդիներից կաղմված քաղաքական ժողովը արժանացել է «Новое Время» լրագրի պաշտպանութեան։ Միմեանց արժանի են։ Լրագրի «Երեւակայական» է գտնում հետազարական այն լուրը, թէ շուր տեղապահը և խա- ուրն ժողովը կամենում են Հայաստանի ղեկը բերի համար պատասխանատու հրատարակել նախկին պատրիարք Խովսեփեանին և նրա խառն ժողովը։ Այդ լուրը հաղորդողը—ասում է «Новое Время» —մի քիչ չտապել է իր «մարդարեւութիւնով»։ Առաջիկայ կողմնադասութեան և կանխակալ դի- տաւորութիւնների մէջ մարդկանց ամբաստանե- լու ձեռք արգէն շատ հնացած ձև է և հաւատալ այդպիսի «Քորոշներին» կարող են միայն կամ շատ միամիտ և կամ իրանց համար անհաճոյ ճշմարտութեան թագցնելուն մէջ չա՛հ ունեցող մարդիկ։ Աւելի լաւ էր լինէր չը չտապել դու- չակութիւններ անել, այլ շատանալ միայն պարզ ամբաստանութեամբ, թէ Բարթոլոմէոս եպի- կոպոսը և Բ. Գրան կողմից նշանակված խառն ժողովի անդամները թրքաւէրներ են։ Իսկ

մենք խորհուրդ կը տայինք Սուլթանի օրգանին՝ նախ քան իր հովանաւորութեան ներքոյ աւանդ Բարթոլոմէոսին և հայ էֆէնդիներին, կամ, ինչպէս անուանում է Կ. Պոլսի մեր թղթակիցը, «ազգապա քրիզին», ծանօթանալ այդ մարդկանց բարոյական պատկերի հետ և ապա կարծիք յայտ- նել։

Գերմանիան շարունակում է իր հակաքրիս- տոնէական քաղաքականութիւնը։ Գերմանական կանցլերի օրգան համարվող «Norddeutsche All- gemeine Zeitung» լրագրից յայտնում է թէ «վերջին ասրիներս գործերի վիճակը Թիւրքիա- յում սպառնալից կերպարանք է ստացել, որով- հետեւ մահմետականները, որոնք առաջ ոչ մի ատեղութիւն չէին տածում ղէպի քրիստոնեանե- ըր, այժմ լցված են ատեղութեամբ այն ղիշու- ների պատճառով, որ Բ. Գուլը անում է քրիս- տոնեաներին։ Մինչև այժմ թիւրքաց զօրքի մէջ զեռ պահպանվում էր կարգապահութիւնը, բայց վնչ Թիւրքիային, եթէ այդ կարգապահութիւնը անհետանայ զանազան թէֆորմներ պատճառով»։

Ների գիւղեր այրելը, տներ կողոպտելը, բը- նակիչներին կոտորելը,—որոնցով ահա երկու տա- րի է փառում է թիւրքաց զօրքը, գերմանական լրագրի կարծիքով, դեռ բաւական չեն ցոյց տա- լու, որ թիւրքաց զօրքի մէջ կարգապահութեան նշոյլն անգամ չը կայ։

ՄԻ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ

Կօմս Գօլուխօվսկու առաջարկը՝ պաշարել Կրեաէն, ինչպէս յայտնի է, մերժվեց. այժմ Անգլիան իր կողմից մի նոր առաջարկութիւն է արել, որը շատերի կարծիքով մինչև այժմ փո- ճած միջոցներից աւելի ազդու և իրագործելի պէտք է համարել։ Իր առաջարկը Անգլիան կա- պտում է Քրիստոնեական նկատմաների հետ։ Նա առաջարկում է, պարզապէս, դրաւել սուլթանին միտքով։ Եւ որովհետեւ թիւրքական Քրիստոնեա- լիկները ընդամենը ընդամենը մի՛նչ են, ուստի շատ հաւանական է, որ Կ. Պոլսում պատրաստ- կանութիւն ցոյց տան ծախել փողով այն, ինչ որ չեն կամենում զիջել արդարութեան սկզբ- բունքների անուամբ։ Լօրդ Սոլիսբերիին առա- ջարկում է թիւրքաց կառավարութեան հետեւալ կօմիքնացիան. սուլթանը տալիս է կրեաացիներ- ըին լրացուցիչ արտօնութիւններ և դրա փոխ- րէն Թիւրքիան ստանում է 25 միլիոն ֆրանկ փող։ Տեսնենք ինչ դուրս կը գայ այդ նոր ծրա- գրից։

Կ Ի Տ Է

«L'Indépendance Belge» լրագրից հաղորդում է, որ Կրեաէ կղզին խաղաղացնելու համար կօչ- ված թիւրքաց զինուորները եկել են այստեղ, բերելով իրանց հետ ահագին թանկագին իրեր, որը կողոպտել են Հայաստանում։ Կրեաէ կղզ- ղում նրանք կողոպտեցին և այրեցին մօտ 28 քաղաք և զիւր Նիկեացիները քանդվել են, տը- ները այրվել են, ազգաբնակչութիւնը փախել է սարերը։ Գալատի բնակիչները, իմանալով թիւր- քաց զօրքի գալուստը, չտապում են թողնել քա- ղաքը։ Ձինուրները ամենից առաջ ընկան եկե- ղեցիների վրա։ Նրա եկեղեցական զգեստները և անօթները բաժանեցին իրանց մէջ, սկսեցին ա- լերել տները։ Նիկեացիներից դուրս բերեցին զի- նով լի տակոններ և հէնց փողոցներում սկսե- ցին խմել։ Գերեղմանատնում կողոպտեցին զերեղմանները. մօտ 10 դիակ դուրս հանեցին զազաղներից և 2-ն էլ ներքը լափեցին։

ՆԱՆՍԵՆԻՎ ԵՒ ՆԱՄԱՐԱԶԸ

1893 թ.ին, նորվէգիացի Նանսենը ձեռնարկեց մի նաւարկութեան՝ հիւսիսային բևեռը գտնե- լու նպատակով։ Նրկար ժամանակ Նանսենից ոչ մի լուր չը կար։ Մի քանի ամիս առաջ անորոշ լուրեր սկսեցին հասնել, թէ Նանսեն վերադա- նում է։ Այդ լուրերը այժմ իրականացան և, ճը- մարիտ, Նանսեն ողջ և առողջ հասել է իր հայ- րենիքը։

Առաջ ենք բերում քաղաքածօրէն, Ռուսաց գոր- ձակալութեան հեռագիրներից, Նանսենի ճանա- պարհորդութեան մասին կարևոր տեղեկութիւն- ները։ 1893 թ.ի օգոստոսի 14-ին Նանսեն անց- նում է Խաղաղիկի նեղուցը։ Նա գտնում է թէ

Կարի ծովում և թէ ցամաքի մօտ մինչև Չէ- լիսի հրուանդանը բազմաթիւ նոր կղզիներ։ Օղի բարեխառնութիւնը հասնում էր 620-ի։ Սառուցի տակ ջուրը աւելի ունէր։ Հօլֆարէմ հոսանքի շնորհիւ, ամառը ջերմաւալից ցոյց էր տալիս 31 —33 աստիճան։ 1894 թ. ջրօրհնէքին Նանսենը հասաւ լայնութեան 83, 24 աստիճանի։ «Ֆրամ» չոգենաւը երկար ժամանակ պնտում էր ղէ- պի հիւսիս-արևմուտք. այդ պատճառով Նանսեն և նրա ուղեկից իօհանսէնը թողեցին այդ նա-ւը մարտի 14-ին, գտնվելով լայնութեան 83,590-ի և երկարութեան 102, 270-ի տակ։ Նոյնը հիւսիսային ուղղութեամբ հետադառնու- համար Նանսենը հետը վեր առաւ 28 չուռ, եր- կու սալ և երկու մակոյկ։ Սառուցների միջով անցնելը շատ դժուար էր։ Նանսեն և իօհանսէն ապրիլի 7-ին, հասնելով 86,140, վերադարձան 820-ից այն կողմ, ղէպի հիւսիս, ոչ մի երկիր չէր գտել։ Նանսեն և իօհանսէն, ուղղվելով ղէպի հարաւ, հասան «Ֆրանց-Յոլմէյի» երկիրը, որ- տեղ ձմեռեցին, կերակրվելով արջի մսով և կետ ձկան ճարպով և իրանց համար բնակարան չի- նելով։ Այդտեղ նրանց պատահեց անգլիական չոգենաւ Վիլհելմարը, որ վեր առաւ նրանց և այս օգոստոսի 1-ին բերաւ հասցեաց Վարդէ։

Նանսենի ուղեորութեան գիտնական հետեւաղ- ները ահագին են, բայց այնու ամենայնիւ, նա չը կարողացաւ հասնել հիւսիսային բևեռին։

ՆԱՄԱԿ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Թ աւ ւ ի ղ, յուլիսի 21-ին

«Մշակի» անցեալ համարներից մէկում հա- ղորդված էր, որ յայտնի Շէյխ Ջէմալէդդինը, բեր- վելով այստեղ, ուղարկվեց Թէհրան։ Այդ լուրը, ինչպէս երևում է Հալախի գործակալութեան հեռագրից էլ, ճիշդ չէ։ Ջէմալէդդինը ոչ միայն չէ բռնված, այլ և նա ազատ բանակցութիւնների մէջ է մտնում սուլթան Համիդի հետ։ Այստեղ բերվել էին միայն նրա երեք ընկերները, որոնք, ինչպէս այսօր իմացանք, նախընթաց գիշերը գլխատվել են բանտում՝ Վալիաթի հրամանով։ Համաձայն արեւելեան հին սովորութեան, զրանց գլուխները կուղարկվեն Դահիյն։

Առաջ ենք բերում մի ղէպը, որը սպառնում է նորից խանգարելու քրիստոնեաների խաղա- դութիւնը։ Ինչպէս յայտնի է, Թաւրիզում ևս գոյութիւն ունի ամերիկացի միսիոնարների միասիւ, որը բաւական աջողութիւն է գտնում հէնց պարսիկների մէջ։ Մօտ անցեալում մի բողո- քական օրիորդ, մի քրիստոնեայ պարսիկի տան ժողովելով իր չուրջը բաւական թով պարսիկ կանայք, աւետարան է քարոզում։ Լուրը հասնում է մի քանի սեյիդների, որոնք 300 հոգի իրանց գլխին հաւաքած՝ դիմում են քաղաքապետին և թողաւութիւն խնդրում հայերի աների վրա յարձակվելու, այն յանդիմանութեան համար, որ թոյլ է տաւ մի հայ կին։ Պէտք է ասել, որ այստեղ բոլոր քրիստոնեաները և հայեր են ասվում։ Քաղաքապետը մի կերպ կարողանում է նրանց խաղաղացնել և յետ դարձնել։ Ամբողջ փոխանակ ցրվելու, իր կատարութիւնն ուղարկ է թափել քրիստոնեայ պարսիկ գլխին և յարձակ- վում է նրա տան վրա։ Պարսիկը մի կերպ փախչում է և գիշերն անհետանալով Թաւրիզից, աղաւտում է իր կեանքը։ Ինչպէս տուրը ենթարկ- վում է ամբողջ յախապետութեան։

Արտաւաղդ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հոռոմից հեռագրում են «Daily Messenger» լրագրին, յուլիսի 25-ից. «Պապը մի ինքնագիր նամակ է ուղղել սուլթանին, որի մէջ համոզում է հաւատացեալների հրամանատարին դադարե- ցնել արեւմտեղ կռիւները քրիստոնեաների և մուսուլմանների մէջ»։

—Խօսելով Յոնաստանի՝ կրեական հարցի վերաբերմամբ բռնած դիրքի մասին, «Биржевая Ве́домостъ» լրագրից հետեւալ արդարացի դի- տողութիւնն է անում. «Շատերը տրամադիր են պախարակելու Յոնաստանը և յոյներին, կրեաա- կան քրիստոնեաներին ցոյց տուած համակրու- թեան համար. սակայն եթէ այդ համակրու- թիւնը չը լինէր, յոյները կը դադարէին ազգ կոչ- վել և կը կորցնէին որ և չէ յարգանք»։

